

**«Հայաստանի Հանրապետության կառավարության
2007 թվականի մայիսի 3-ի N 542-Ն որոշման մեջ
լրացումներ կատարելու և Հայաստանի
Հանրապետության կառավարության 2005
թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման մեջ
լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության
որոշման նախագիծ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2018 թվականի N -Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ
3-Ի N 542-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N
2335-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ աշխատանքային
օրենսգրքի 205-րդ հոդվածի և 209-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները՝
Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի
մայիսի 3-ի «Դաշտային պայմաններում կամ տեղափոխման
(տեղաշարժման) բնույթ կրող աշխատանքներում աշխատողների
կողմից կատարվող լրացուցիչ ծախսերի գումարի հատուցման
նվազագույն և առավելագույն չափն ու վճարման կարգը սահմանելու և
Հայաստանի Հանրապետության կառավարության 1993 թվականի
օգոստոսի 10-ի N 418 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N
542-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը «չափին» բառից հետո լրացնել «իսկ
այն դեպքում, երբ տեղափոխման (տեղաշարժման) բնույթ կրող
աշխատանքներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության
տարածքից դուրս, աշխատողների կողմից կատարվող լրացուցիչ ծախսերի
գումարի հատուցման նվազագույն չափը համապատասխանում է Հայաստանի
Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N
2335-Ն որոշման N 2 հավելվածով օտարերկրյա պետություններ գործուղվող
աշխատողների օրապահիկի համար հաստատված չափին».

2) որոշման հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին կետով.

«5.1. Այն դեպքում, երբ գործատուի անհատական իրավական ակտի համաձայն՝ տեղափոխման (տեղաշարժման) բնույթ կրող աշխատանքներում աշխատողը մեկ օրվա ընթացքում գտնվում է մեկից ավելի երկրում (քաղաքում), ապա հատուցման գումարը վճարվում է համապատասխան երկրների (քաղաքների) համար նախատեսված օրապահիկների միջինի չափով:»

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման, օտարերկրյա պետություններ ուսման կամ ծառայության գործուղված Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողի և նրա ընտանիքի անդամների, օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմին ծառայության մեկնող դիվանագետի և նրա ընտանիքի անդամների՝ Հայաստանի Հանրապետությունից օտարերկրյա պետություն մեկնելու կամ օտարերկրյա պետությունից Հայաստանի Հանրապետություն վերադառնալու տրանսպորտային ծախսերի, ինչպես նաև օտարերկրյա պետությունում բնակելի տարածության վարձակալության համար դրամական փոխհատուցման կարգերն ու չափերը հաստատելու մասին» N 2335-Ն որոշման N 1 հավելվածի 7-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«Այն դեպքում, երբ գործատուի անհատական իրավական ակտի համաձայն՝ աշխատողը մեկ օրվա ընթացքում գտնվում է մեկից ավելի երկրում (քաղաքում), ապա օրապահիկը վճարվում է համապատասխան երկրների (քաղաքների) համար նախատեսված օրապահիկների միջինի չափով:»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: